

Հրապարակի վրա դրւած է երկու արտակարգ յօրէլեան. տպագրութեան 400 և «Մշակ» լրագրի 40 ամեակը:

Այդ երկու յօրէլեանը սերտ կապերով կապւած են միմեանց. — գրականութեան տօնախմբութիւն. ազգային կուլտուրայի բարձրացման, նրա հարատև ջանքերի, փաստակաւոր, հանրօգուտ, բեղմնաւոր գործնէութեան և հազար ու մի առաքինութիւններէ պսակն է համարելու այդ տօնախմբութիւններն...

Մէկի գլուխն է անցել ինքն «Մշակ» լրագիրը, միւսին «Հօրիգօնը»: Սրանք առերևոյթս իրար հակառակուած են, բայց փաստը մնում է փաստ, որ երկուսն էլ տօնում են միևնոյնը. մէկը ընդգծում է 400 տարիների մամուլի և զրբերի տպագրութեան գործը, միւսը սահմանափակում է միայն մի թերթի քառասուն ամեակով. տարբերութիւնը միայն դրա մէջն է:

Բայց ցաւալին սա է; որ երկու օրգանն էլ համարւում են իբրև առաջնօրդ, իբրև ազգային և հանրական գործերին ուղղութիւն տւող, իբրև առաջադիմութեան և լուսաւորութեան դեկավար, սակայն այսօր ճիշտ հակառակն են գործում:

Անաչառ և շիտակ մամուլը դէմ պէտք է լինի ամեն տեսակ յօրէլեաններ սարքելուն, մանաւանդ այս ձևի, ուր պէտք է մուրալ պատիւը, ուր պէտք է մուրալ փողը. դա աղքատութիւն է, մուրացկանութեան ամենաստոր ձևը:

Եթէ «Մշակ» լրագիրը իր գոյութեան ընթացքում, այդ 40 ձիգ տարիներին, չի կարողացել իրան համակրող այնքան բաժանօրդ ունենալ, որ թերթի գոյութիւնը միանգամայն ապահովէր, ապա յօրէլեանական նւէրներով երկար չէ կարող ապրել. եթէ նա երկար տարիների ընթացքում մի հստակ աղբիւր չկարողացաւ ստեղծել իր համար, ապա հեղեղից գոյացած «դարասուն» նրան ահունք չի կարող լինել:

Զօրսհարիւր տարի հայ ազգը տպագրութիւն է ունեցել, բայց այսօր նրա 90 տօկօս անգրագէտ է:

Քառասուն տարի հայ տառերով թերթ է տպւել, լուսաւորութիւն է տարածւել, բայց այսօր հարիւրաւոր զիւղեր առանց դպրօցի են մնացել:

Ահա պարօններ, տօնեցէք այն մեծ յօրէլեանը, որ հայ մարդը այս լուսաւոր դարում անգրագէտ է, որ հայ գիւղացին ապրում է գետնափօրներում իր չօրստանի անասունների հետ:

Տօնեցէք այն մեծ առաւելութիւնը, որ հարիւր հազար բնակիչ ունեցող գաւառը մի հատիկ բժիշկ չունի, որ հայ արհեստաւորը մէջքը կօրացած, կօշտացած ձեռքերով գիշերը օր է անում, օրը գիշեր և հազիւ է կարողանում քաշ տալ իր ողորմելի գոյութիւնը, որ հայ երկրագործը գարի ու կօրէկ ուտելով ծայրահեղ թշւառութեան մէջ սօսկում է սօսի ահեղ ուրւականից:

Դեռ չեմ ասում, որ 400 տարի տպագրութիւն ունի հայ ազգը, և այսօր մի ամսագիր չէ կարողանում պահել, մի կարգին դրադարան չունի: Հայ հեղի-

նակը ստիպւած է հաշւապահութիւն սօվօրել, կամ գրագրութեամբ պահպանել իր գօյութիւնը... Տօնեցէք, պարօններ, և հայտարարեցէք որ դա կուլտուրայի հաղթանակի տօնն է...

Յայդ բօլօրի առաջ ինքն մամուլը պէտք է առնէ. նա իր գօրեղ ձայնով, նա իր կօշումով արմատախիլ պէտք է անէ վսյրենութիւններից մնացած տօնախմբութիւնները և յօբէլեանները:

Մարդու արժանապատուութիւնից ցածր է տօնել, մեծարել որևէ անհատի, հիմնարկութեան, կամ որևէ առիթաւօր տարեշրջանների տօնախմբութիւնը:

Ինչոր անցած է, դա արդէն պատմութեան է վերաբերում. սրա և նրա յօբէլեանն է, և նրա արժանիքը գնահատողը, և նրա կատարած գերը որօշողը: Իսկ մնացած որևէ ձեական արարքները առնւազը ցուցամօլութիւն է:

Եթէ փօղ կարօղ էք հաւաքել, եթէ կան բարերարներ, որ չգիտեն ինչ կերպ հաւերժացնեն իրանց օժանդակութիւնը, ահա ծօլ կարիք ձեր առաջբաց արէք ամեն գիւղում մի-մի ուսումնարան. թօղ հայ մարդը գրագէտ լինի, թօղ նա ուսումնասիրէ իր ազգը, իր անցեալը, թօղ նա շխարխափի խաւարի մէջ:

Այն ժամանակ մի թերթ, որ 40 տարի գօյութիւն է ունեցել, անշուշտ յօբէլեանների կարիք չի ունենալ: Հարկաւօր է հիմնաւօր և լուրջ վերաբերւել և ոչ թէ առերևոյթս միայն:

Ահաւասիկ 400 տարի մենք այդպէս ենք վերաբերւել, մակերևոյթային, առանց թափանցելու, առանց ուսումնասիրելու երկրի իսկական դրութիւնը:

Ահա և դրա արդիւնքը, քսաներօրղ լուսաւօր դարում հայ մասսան խարխափում է խաւարի ճիրաններում. այնինչ նրա լուսաւօր դասը, նրա ինտէլիգէնցիան տօնախմբութիւններով է գրաղւում:

Սաշատուր Արօվեանը երախտապարտ կլինէր, եթէ այն տասնեակ հազարներօլ գիւղական ուսումնարաններ բանայինք:

Սիրեցէք դուք էլ այնպէս ինչպէս նա սիրել է ժօղօվուրղը: Այդ գումարօլ կարելի է 10 դպրօց ունենալ և այդպիսօլ հազարաւօր երեխաների ուսումից գրկած չէք լինիլ մի մահարձանի համար:

Թօղէք իսէր Աստծու այդ յօբէլեանները. ամօթ է վերջապէս մեր օրերում 90 տօկօս անգրագէտ ունենալ: Եթէ չենք կարօղ պարտաղիր ուսում տալ, գօնեա աշխատենք ամեն մի գիւղում մի հատիկ ուսումնարան ունենալ: Ամեն մի գիւղին հարիւր բուրլի տէք, մնացածը իրանք կհօգան:

Այդպիսօլ երբ մեր գաւառը լուսաւօրի, երբ գրագիտութեան տօկօսը հասնի 90 ի, այն ժամանակ դուք կը տեսնէք ապահօվւած թէ գիւղացուն, թէ բաղաքացուն, թէ արհեստաւօրին, և գրօղն իր գրւածների վաստակօլ կապահօվէ իրան, այն ժամանակ այլևս ոչ մի կարիք չի լինիլ ևայլ գանաղան Ֆօնդերի մասին մտածել, գանաղան մուրացկանական և անկելանօցային հիմնարկութիւններ հիմնել: